



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 09/2025-Ա/Վ

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

28 դեկտեմբերի 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Ժորայի Դումանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի հոկտեմբերի 1-ին հարուցված թիվ 09/2025-Ա/Վ վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑ

I. Նախապայմանություն

1. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումների հիման վրա իրականացված ուսումնասիրության, այդ թվում՝ ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Դումանյանի կողմից Հանձնաժողով ներկայացրած 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) տվյալների ստուգման արդյունքում պարզել է հետևյալը.

1.1 ՀՀ Կառավարության պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Վահրամ Դումանյանը 2025 թվականի ապրիլի 30-ից զբաղեցնում է ՀՀ վարչապետի խորհրդականի պաշտոնը, իսկ 2023-2025թթ. զբաղեցրել է ՀՀ Նախագահի խորհրդականի պաշտոնը:

1.2 Հայտարարագրի «Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Վահրամ Դումանյանը հայտարարագրել է իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ին ձեռքբերված բաժնեմասը «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ նաև Ընկերություն) (1.15%): Նույն տեղեկատվությունը Վահրամ Դումանյանը հայտարարագրել է նաև իր՝ 2021 և 2022 թվականների տարեկան և պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերում:

1.3 Ըստ ՊԵԿ տեղեկատվական շտեմարանի և Վահրամ Դումանյանի՝ 2024 թվականի տարեկան հայտարարագրի տվյալների՝ Վահրամ Դումանյանը «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ Ընկերությունից 2024 թվականի ընթացքում եկամուտներ չի ստացել:

1.4 Բաց աղբյուրների ուսումնասիրությամբ (<http://www.old.yso.am/cooperation/hy/chffseyraz>) պարզվել է, որ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ Ընկերությունը համագործակցում է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի հետ, առցանց վաճառքի կայքերում ունի ներկայացվածություն (վաճառում է իր արտադրած դեղորայքը), արտադրանքի 70%-ն արտահանում է Ռուսաստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Վրաստան և այլ երկրներ:

1.5 2021 թվականի տարեկան և 2022 թվականի պաշտոնեական պարտականությունների դադարեցման հայտարարագրերում Վահրամ Դումանյանը հայտարարագրել է «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ Ընկերությունում իր 1.1539 % բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ: Ըստ այդմ՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ից 3 տարի ժամկետով (մինչև 17.12.2023թ.) բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման Վահրամ Դումանյանի դստերը՝ Սոնա Դումանյանին:

1.6 Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 28-ին թիվ 01/3346-2025 գրությամբ հարցում է ուղարկել Վահրամ Դումանյանին՝ առևտրային կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասերի հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ: Ի պատասխան

Հանձնաժողովի գրության՝ Վահրամ Դումանյանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 12-ը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման Սոնա Դումանյանին: 2023 թվականին՝ ՀՀ նախագահի խորհրդական նշանակվելուց հետո, առաջնորդվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11.1-ին մասի փոփոխությամբ, համաձայն որի՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք, 2023 թվականի փետրվարի 15-ին «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը 3 տարի ժամկետով հանձնել է հավատարմագրային կառավարման ֆիզիկական անձ Աշոտ Սամվելի Մանուկյանին: Արդյունքում Վահրամ Ժորայի Դումանյանը թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում, քանի որ ֆիզիկական անձինք չեն կարող հանդես գալ որպես առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ:

1.7 Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 1-ին կայացրել է ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Ժորայի Դումանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 09/2025-Ա/Վ որոշումը:

2025 թվականի հոկտեմբերի 1-ին թիվ 01/3713-2025 գրությամբ «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Վահրամ Դումանյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

1.8 Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 21-ին թիվ 01/4043-2025 գրությամբ հարցում է կատարվել Պետական եկամուտների կոմիտե՝ Վահրամ Դումանյանի կողմից ստացված եկամուտների վերաբերյալ, ինչպես նաև «ԵՐԵՎԱՆԻ

ՔԻՄԻԱ-ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՖԻՐՄԱ» ԲԲ ընկերության իրացման շրջանառության: Բացի այդ, Հանձնաժողովը թիվ 01/4044-2025 գրությամբ հարցում է ուղարկել ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա՝ «ԵՐԵՎԱՆԻ ՔԻՄԻԱ-ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՖԻՐՄԱ» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում Վահրամ Դումանյանի ունեցած բաժնեմասի քանակի և ձեռք բերման (օտարման) վերաբերյալ:

1.9 Հանձնաժողովը, թիվ 01/4045-2025 գրությամբ հարցում է կատարել նաև ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ Վահրամ Դումանյանին վերապահված ոլորտների համակարգման և իր կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վահրամ Դումանյանի վարքագծում անհամատեղելիության պահանջների ըստ էության խախտման առկայության կամ բացակայության մասին վկայող հանգամանքների համակցության մասին վկայող տվյալների շարքին է պատկանում Վահրամ Դումանյանին վերապահված ոլորտների համակարգման և իր կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված հանգամանքը կարող է էական նշանակություն ունենալ շահերի հնարավոր բախման գնահատման, մասնավորապես՝ մասնավոր շահի առկայության և դրա միջոցով ծառայողական պարտականությունների իրականացման վրա ազդեցություն գործադրելու, այդ թվում՝ Վահրամ Դումանյանին վերապահված համակարգման ոլորտների, իրականացվող գործառույթների և Ընկերության գործունեության ոլորտի միջև հնարավոր կապը բացահայտելու անհրաժեշտության տեսանկյունից:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի հոկտեմբերի 3-ին թիվ Մ-5455-2025 գրությամբ Վահրամ Դումանյանը պարզաբանում է ներկայացրել վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ.

«Բաժնետոմսերի ձեռքբերումը

Հայրս՝ Ժորա Գրիգորի Դումանյանը, տասնյակ տարիներ, հիմնադրման օրվանից սկսած, եղել է «Երևանի քիմիա-դեղագործական գործարան»-ի գլխավոր ինժեները և դեռևս 90-ական թվականներին գործարանի մասնավորեցումից հետո ձեռք է բերել նշված գործարանի բաժնետոմսեր [REDACTED]

Հորս մահից (2009թ.) հետո, 02.02.2010թ.-ին բաժնետոմսերի սեփականատեր է գրանցվել մայրս՝ Հասմիկ Մովսեսի Հայրապետյանը (քաղվածքը կցվում է):

05.02.2010թ.-ին մայրս բաժնետոմսերը նվիրաբերել է ինձ և ես դարձել եմ գրանցված սեփականատեր (քաղվածքը կցվում է):

Բաժնետոմսերի հավատարմագրային կառավարումը

2020թ. նոյեմբերի 23-ին նշանակվել եմ ԿԳՄՍ նախարար և 2020թ. դեկտեմբերի 17-ին «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ կանոնադրական կապիտալում իմ անունով գրանցված բաժնետոմսերը [REDACTED]

իմ կողմից տրվել են հավատարմագրային կառավարման Սոնա Վահրամի Դումանյանին երեք տարի ժամկետով (պայմանագիրը կցվում է):

2022թ. դեկտեմբերի 12-ին ազատվել եմ նախարարի պաշտոնից:

2023թ. փետրվարի 2-ին նշանակվել եմ ՀՀ նախագահի խորհրդական և 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11.1 մասի համաձայն՝ «Որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք», պայմանագրի գործողության ժամկետի ավարտից շուտ, դադարեցվել է Սոնա Վահրամի Դումանյանի հավատարմագրային կառավարումը և 2023թ. փետրվարի 15-ին «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ կանոնադրական կապիտալում իմ ունեցած բաժնեմասը հանձնել հավատարմագրային կառավարման Աշոտ Սամվելի Մանուկյանին (պայմանագիրը կցվում է):

Խնդրում եմ՝ հաշվի առնել, ինչպես վերը նշել եմ, որ հավատարմագրային կառավարումը ֆիզիկական անձ-կառավարիչ Աշոտ Սամվելի Մանուկյանին հանձնել եմ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11.1 մասի համաձայն, իսկ ԿԿՀ որոշման մեջ նշված այն փաստը, որ հավատարմագրային կառավարիչը չի բավարարում նույն օրենքի 11 մասի 2-րդ կետի պահանջներին, տեղի է ունեցել օրենքի տվյալ կետի չիմացության և այդ մասին տեղեկացված չլինելու պատճառով: Անհամապատասխանությունը ընդունում եմ ի գիտություն և միջոցներ կձեռնարկեմ այն վերացնելու համար:

Վերը շարադրվածի վերաբերյալ հարցեր առաջանալու պարագայում պատրաստ եմ տրամադրել հավելյալ պարզաբանումներ:

Հ.Գ. Ցանկանում եմ նաև հայտնել, որ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ի հետ վերջին անգամ առնչվել եմ 2021թ.-ին (160 785 դրամ շահաբաժին եմ ստացել, 2021թ.-ից հետո շահաբաժին չեմ ստացել) և այդ բաժնետոմսերի կառավարման հետ կապված որևէ գործունեություն կամ գործողություն չի եղել:»:

III. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործունեությանն առնչվող տեղեկություններ

ՀՀ նախագահի 2023 թվականի փետրվարի 2-ի թիվ ՆՀ-53-Ա հրամանագրի հիման վրա Վահրամ Դումանյանը նույն օրվանից նշանակվել է ՀՀ նախագահի խորհրդական:

(<https://www.president.am/hy/decrees/item/5799/>)

ՀՀ նախագահի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ ՆՀ-106-Ա հրամանագրի հիման վրա Վահրամ Դումանյանը նույն օրվանից ազատվել է ՀՀ նախագահի խորհրդականի պաշտոնից:

(<https://www.president.am/hy/decrees/item/6216/>)

ՀՀ վարչապետի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 358-Ա որոշման հիման վրա Վահրամ Դումանյանը նշանակվել է վարչապետի խորհրդական:

(<https://www.arlis.am/hy/acts/206459/latest>)

ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջի տվյալների համաձայն՝ Վահրամ Դումանյանը ստանձնել է ՀՀ վարչապետի խորհրդականի պաշտոնը 2025 թվականի ապրիլի 30-ից և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել:

(<https://www.gov.am/am/staff-structure/other/1017/>)

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. ՀՀ նախագահի 2023 թվականի փետրվարի 2-ի թիվ ՆՀ-53-Ա և 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ ՆՀ-106-Ա հրամանագրերի, ինչպես նաև՝ ՀՀ Կառավարության պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Վահրամ Ժորայի Դումանյանը 2023 թվականի փետրվարի 2-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը հանդիսացել է ՀՀ նախագահի խորհրդական: 2025 թվականի ապրիլի 30-ից ստանձնել է ՀՀ վարչապետի խորհրդականի պաշտոնը և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել:

2. **2023 թվականի փետրվարի 15-ին** կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն՝ Վահրամ Դումանյանը «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա»

ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը (1.1539 %) երեք տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ **Աշոտ Սամվելի Մանուկյանին**:

3. ՊԵԿ հարկ վճարողների փնտրման համակարգի համաձայն՝ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերությունը գործող է:

4. Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 01/4043-2025 գրությանն ի պատասխան, որով հարցում էր արվել Վահրամ Ժորայի Դումանյանի կողմից 2023 թվականի փետրվար ամսից սկսած ստացված եկամուտների, ինչպես նաև՝ Ընկերության 2023-2025 թվականների իրացման շրջանառության, շահութահարկի մասին՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2025 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ /71-6/65192-2025 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023-2025 թվականների ընթացքում Ընկերությունն ապահովել է իրացման շրջանառություն և հարկային պարտավորությունների մասով կատարել է վճարներ պետական բյուջե, սակայն Վահրամ Դումանյանը հարցված ժամանակահատվածում «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերությունից շահաբաժին կամ որևէ այլ եկամուտ չի ստացել:

5. 2025 թվականի հոկտեմբերի 17-ից Վահրամ Դումանյանը Ընկերության իր 1.1539 % բաժնեմասը նվիրատվությամբ փոխանցել է Գևորգ Վահրամի Դումանյանին:

6. ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայից ստացված տեղեկատվության համաձայն՝ Վահրամ Դումանյանի արժեթղթերի հաշվում 17.10.2025 թվականին «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կողմից թողարկված թվով [REDACTED] [REDACTED] հատ հասարակ անվանական բաժնետոմսերը նվիրատվության գործարքով օտարվել է, որի արդյունքում վերջինիս արժեթղթերի հաշվում «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության բաժնետոմսեր այլևս գրանցված չեն:

7. ՊԵԿ հարկ վճարողների փնտրման համակարգի համաձայն՝ Ընկերությունը գործունեություն է իրականացնում «Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրության» ոլորտում (C21.20.1):

8. ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Դումանյանին վերապահված է հանրակրթության մեջ աշակերտների և ուսուցիչների համար արհեստական բանականության գործիքների ներդրման միջազգային փորձի ուսումնասիրության, վերլուծության, զարգացման միտումների

կանխատեսումը, տեղական մակարդակում առկա հիմնահարցերի վերհանումը և դրանց լուծումը, ինչպես նաև միջազգային փորձի ներդրման ուղղությամբ առաջարկությանների ներկայացումը:

V. Անհամադրելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

2. Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և **հայեցողական**:

3. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական հայեցողական պաշտոն է նաև **վարչապետի խորհրդականի պաշտոնը**:

4. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, **զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

5. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում**, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

6. Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

7. Օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

8. Օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում (...) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ **հանձնվել են հավատարմագրային կառավարման**, կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

9. Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ): Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:**

10. Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել՝

1) սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները.

2) **բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:**

11. Նույն հոդվածի 11.1-ին մասի համաձայն՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

12. Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

13. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ **պետական պաշտոն զբաղեցնող անձանց**, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը**:

14. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել սեփական նախաձեռնությամբ:

15. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց (...) կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, (...) առկայության պարագայում հարուցում է **համապատասխան վարույթ**:

16. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

17. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին (...):

VI. Հանձնաժողովի պարզառարանություններն ու եզրահանգումը

Պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց համար անհամատեղելիության պահանջները, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ինչպես նաև առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու, հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջներն ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Օրենքով անհամատեղելիության պահանջների էությունից բխում է, որ համապատասխան պաշտոնի նշանակվելուց հետո՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար անձը ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բացառապես իր պաշտոնական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը պետական մարմիններ բացառելու օրինաչափ նպատակը:

Ի թիվս այլնի՝ անհամատեղելիության պահանջներից բխում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ունենալ բաժնեմաս կամ մասնակցություն առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում:

Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

Թեև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պահանջը կրում է իմպերատիվ բնույթ, այդուհանդերձ, նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքը, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում

ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է՝ պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում** առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման՝ դրանով իսկ ապահովելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը, ինչպես նաև բացառելով վերջիններիս մոտ շահերի բախման հնարավոր իրավիճակները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների չպահպանումը, մասնավորապես պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն ինքնին հանգեցնում է գործարար ոլորտի և հանրային ծառայության սերտաճման, ինչպես նաև շահերի հնարավոր բախման, երբ պաշտոնատար անձը կարող է իր պաշտոնական դիրքն օգտագործել անձնական կամ տնտեսական օգուտներ ստանալու նպատակով: Այս դիսկը բացառելու նպատակով Օրենքը նախատեսում է, որ, ի թիվս այլնի, պաշտոնատար անձը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում: Հենց այդ պատճառով է սահմանվել բաժնեմասի հավատարմագրային կառավարման ինստիտուտը, որի նպատակը պաշտոնատար անձին զերծ պահելն է ձեռնարկատիրական գործունեությունից: Այս համատեքստում բաժնեմասի փոխանցումը որոշակի կառավարման սուբյեկտի թույլ է տալիս ապահովել կառավարման թափանցիկություն, վերահսկելիություն և պատասխանատվություն՝ դրանով իսկ կանխելով գործարար ոլորտի և հանրային ծառայության սերտաճումը: Միևնույն ժամանակ, ֆիզիկական անձի կողմից բաժնեմասի կառավարումը չի ապահովում անհրաժեշտ անկախություն և վերահսկելիություն, առնվազն այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձը կարող է լինել պաշտոնատար անձին փոխկապակցված անձ և փաստացի կառավարվել պաշտոնատար անձի կողմից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի նախկին խմբագրության (<Օ-206-Ն, ընդունված 23.03.2018թ.) 31-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հավատարմագրային կառավարիչ կարող էին հանդիսանալ նաև ոչ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ Օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով ամրագրված կարգավորումները, ըստ

էության, չէին լուծում իրենց առջև դրված խնդիրը, այն է՝ չէին ապահովում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը:

Ներկայացված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով էլ փոփոխվել և լրացվել է Օրենքի համապատասխան հոդվածը, որի նպատակը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումն է, ինչպես նաև կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև փոխկապակցվածության և միասնական շահի բացակայության ապահովումը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու, մասնավորապես՝ հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջներից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը նախատեսել է, որ հավատարմագրային կառավարիչներ կարող են լինել այնպիսի սուբյեկտներ, որոնք ունեն որոշակի կարգավիճակ, մասնավորապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները, իսկ բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և ունեն հաշվետվողականության, վերահսկելիության, ինչպես նաև պետական գրանցման մեխանիզմներ, ինչն ապահովում է գործունեության թափանցիկություն, ինչպես նաև նվազեցնում է շահերի բախման վտանգը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կառավարման սուբյեկտի գործունեությունը ենթակա է հարկային և ֆինանսական վերահսկողության: Մինչդեռ, Ֆիզիկական անձի նկատմամբ նման ինստիտուցիոնալ վերահսկողություն չկա, առնվազն այն հաշվառմամբ, որ ֆիզիկական անձի դեպքում առկա է անձնական կապերի ազդեցության բարձր ռիսկ, ինչի հետևանքով պաշտոնատար անձը կարող է պահպանել փաստացի վերահսկողություն իր բաժնեմասի նկատմամբ:

Այսինքն, Օրենքով նախատեսված է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձին պատկանող բաժնեմասը կարող է փոխանցվել հավատարմագրային կառավարման միայն

Օրենքով սահմանված հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող կառավարման սուբյեկտի:

Վերլուծելով սույն գործով կիրառելի օրենսդրական կարգավորումները, պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետ՝ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջի պահպանմամբ կառավարման հանձնելու համար և տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով: Այսինքն, օրենսդիրը սահմանել է պայմաններ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպությունում մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեություն չհամարելու համար: Մասնավորապես, երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և պաշտոնի նշանակվելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է Օրենքով սահմանված՝ **հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների պահպանմամբ հավատարմագրային կառավարման:**

Քննարկվող դեպքում, Վահրամ Դումանյանը, 2025 թվականի ապրիլի 30-ից հանդիսանալով ՀՀ վարչապետի խորհրդական, պաշտոնավարմանը զուգահեռ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը (1.1539 %) 2023 թվականի փետրվարի 15-ին երեք տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ Աշոտ Սամվելի Մանուկյանին, որի արդյունքում թույլ է տվել Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն դեպքում կարևորվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում **հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջը**, որը հանդիսացել է, Օրենքի իմաստով հավատարմագրային կառավարիչ հանդես գալու իրավունք չունեցող անձը, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած

բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել՝ քննարկվող դեպքում **բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի** իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, այն է՝ ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը, **բանկը**: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում վերոնշյալ փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի **ձևական և բովանդակային տեսանկյունից**:

Սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի ձևական տեսանկյունից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, ինչը դրսևորվել է Վահրամ Դումանյանի կողմից պաշտոն ստանձնելուց Ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջի խախտմամբ հավատարմագրային կառավարման հանձնելով:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում սույն գործով ձեռք բերված փաստերին անդրադառնալ Օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի և, նշված արարքն անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքն արձանագրելիս էական նշանակություն ունեցող հանգամանքներից է կազմակերպության կառավարման վրա իրական ազդեցություն ունենալը: Հիշյալ հանգամանքն էական նշանակություն ունի, քանի որ հանրային պաշտոնյայի անմիջական մասնակցությունը ընկերության կառավարման գործընթացներին կարող է ազդել ֆինանսական և վարչական որոշումների վրա, այդ թվում՝ վճռորոշ ազդեցություն ունենալ եկամուտների բաշխման, ներդրումների կամ այլ ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ՝ այդպիսով պաշտոնեական դիրքը օգտագործելով առևտրային կամ մասնավոր շահերի սպասարկման համար:

Սույն դեպքում Վահրամ Դումանյանի **բաժնեմասնակցության չափը ընկերությունում ընդամենը 1,1539 %** է, ինչը բարձր նշանակության շեմ չի ձևավորում՝ Ընկերության կառավարման գործընթացի վրա ազդեցության տեսանկյունից: Ընդ որում, կարևոր է փաստել, որ պաշտոնի ստանձնումից հետո իր բաժնեմասի՝ նույնիսկ գործող օրենսդրական կարգավորումների ձևական առումով չպահպանմամբ կառավարման հանձնելու արդյունքում Վահրամ Դումանյանը փաստացի ձեռնարկատիրական գործունեություն, այն է՝ որոշակի գործողություններ անձամբ չի իրականացրել, չի մասնակցել կազմակերպության կառավարմանը և որոշումների ընդունմանը:

Ավելին, բաժնեմասնակցության փոքր ծավալն ինքնին սահմանափակում է մասնավոր շահի առկայության և դրա միջոցով ծառայողական պարտականությունների իրականացման վրա ազդեցություն ունենալու հավանականությունը:

Հաշվի առնելով ներկայացված փաստական տվյալները և իրավական նորմերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկվող դեպքում առանցքային նշանակություն ունի բաժնեմասնակցության չափը, որը տվյալ դեպքում ընդամենը 1.1539% տոկոս է կազմում և իրական շահառու չհանդիսանալու հանգամանքը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը ֆիզիկական անձ Աշոտ Սամվելի Մանուկյանին, ինչպես նաև՝ բաժնեմասնակցության փոքր ծավալն էականորեն նվազեցրել է պաշտոնատար անձի կողմից Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև ազդեցություն ունենալու հնարավորությունը:

Բացի այդ, էական է նաև «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ի և ՀՀ վարչապետի խորհրդականի գործունեության ոլորտային կապի բացահայտումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն կարող էր վկայել ոլորտային շահերի բախման ռիսկի առկայության մասին:

«Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ը գործունեություն է իրականացնում **«Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրության»** ոլորտում (C21.20.1), իսկ ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Դումանյանին վերապահված է **հանրակրթության մեջ աշակերտների և ուսուցիչների համար արհեստական բանականության գործիքների ներդրման միջազգային փորձի ուսումնասիրության,**

վերլուծության, զարգացման միտումների կանխատեսումը, տեղական մակարդակում առկա հիմնահարցերի վերհանումը և դրանց լուծումը, ինչպես նաև միջազգային փորձի ներդրման ուղղությամբ առաջարկությանների ներկայացումը:

Այսպիսով Վահրամ Դումանյանի աշխատանքային պարտականությունների և Ընկերության իրականացրած գործունեության միջև չկա որևէ գործառութային կապ:

Քննարկվող հանգամանքի կարևորությունը կայանում է նրանում, որ ոլորտային շահերի բախման ռիսկի բացակայությունը ապահովում է, որ պաշտոնեական պարտականությունների կատարումը լինի անաչառ և բացառի այն իրավիճակի առաջացումը, երբ անձնական կամ մասնավոր տնտեսական շահերը կարող են հակադրվել պետական կամ հանրային շահերին:

Հանձնաժողովը էական է համարում նաև այն հանգամանքը, որ Վահրամ Դումանյանի կողմից Ընկերության իր բաժնեմասը փաստացի հանձնված է եղել հավատարմագրային կառավարման, թեև Օրենքով չնախատեսված սուբյեկտի: Ֆիզիկական անձին Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու առթիվ Հանձնաժողովը վերահաստատում է իր նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ բաժնեմասը միայն Օրենքով նախատեսված սուբյեկտին հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում է կարող ապահովվել կառավարման ինստիտուցիոնալ սուբյեկտի անկախությունը և հաշվետվողականությունը: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ Վահրամ Դումանյանը Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել Օրենքով չնախատեսված սուբյեկտին, թեև իրավական կարգավորումների խախտում է հանդիսանում, սակայն պաշտոն զբաղեցնող անձի կողմից բացառապես իր պաշտոնական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը պետական մարմիններ բացառելու օրինաչափ նպատակի տեսանկյունից պարունակում է ռիսկայության ավելի ցածր աստիճան:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը էական է համարում այն հանգամանքը, որ Վահրամ Դումանյանը Ընկերության իր բաժնեմասը 2025 թվականի հոկտեմբերի 17-ին օտարել է՝ այդպիսով փաստացի ձեռնարկելով օրենքով սահմանված համապատասխան գործողություններ՝ իրեն պատկանող շահաբաժնից հրաժարվելով, ինչն, ըստ էության, ապահովում է վերջինիս առկա վարքագծի իրավաչափությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Վահրամ Դումանյանի վարքագծում բացակայում է անհամատեղելիության պահանջների բովանդակային խախտում, քանի որ միաժամանակ առկա են հետևյալ հանգամանքները՝

- Վահրամ Դումանյանի բաժնեմասնակցության չափը եղել է **1,1539%** և կազմակերպության կառավարմանը անձամբ չի մասնակցել,

- Վահրամ Դումանյանի կողմից Ընկերության իր բաժնեմասը փաստացի հանձնված է եղել հավատարմագրային կառավարման, սակայն Օրենքով չնախատեսված սուբյեկտի,

- **17.10.2025 թվականին** բաժնեմասը **օտարվել է,**

- իսկ Վահրամ Դումանյանի աշխատանքային պարտականությունները **որևէ կերպ կապված չեն** Ընկերության գործունեության ոլորտի հետ:

Ամփոփելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ արձանագրված չորս հանգամանքներից յուրաքանչյուրը՝ առանձին վերցրած, բավարար չէ անհամատեղելիության պահանջների խախտումը բացառելու համար, սակայն իրենց համաժամանակյա առկայությունը վկայում է Վահրամ Դումանյանի վարքագծում անհամատեղելիության պահանջների խախտման բովանդակային առումով բացակայության մասին, քանի որ թվարկված հանգամանքների **համակցությունը** չեզոքացնում է Ընկերության բաժնեմասը ֆիզիկական անձին հավատարմագրային կառավարման հանձնելու արդյունքում առաջացող ռիսկերը, հետևաբար՝ Վահրամ Դումանյանի կողմից բովանդակային առումով չեն խախտվել հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից, հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից էական համարվող հանգամանքների **համաժամանակյա առկայությունը** և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունը՝ Հանձնաժողովը **եզրահանգում է**, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Վահրամ Դումանյանն իր գործողություններով չի խախտել Օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը,

գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ վարչապետի խորհրդական Վահրամ Ժորայի Դիմանյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ